

ԳՐԱԿԱՆ

(ԱՆՏԻՊ ՊԱՏԱՌԻԿ ՄԸ ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿԷ)

Արծուին վասպուրական
Մինչ ծուարած էր վարագայ բոյն,
Հոգին խռոված էր յոյժ,
Հոգած էր սխուր.

Ասաց երբամ ես
Կարկուտ Խաչի դար,
Նստիմ նայիմ բարձրէն աւխարհ
Այն չնաւխարհիկ տեսարան.

Վանայ ծովակ,
Ոսանայ պալատ,
Առտայ ամպոտ սար,
Գրգուռի կտրակ գլուխ,
Հրաբուխ Նեմրութ եւ Սիփան
Աղբամար Գազկայ գահ,
Առէր կղզին նզնող Գրիգորի,
Կտուց եւ Լիմ անապատ,
Արտամետու նոխ մրգաստան,
Վանայ փաղափ, ամբողջ այգեստան.

Վա՛հ, արտիկա բացուեցաւ,
Զուարթացաւ իմ բռնած հոգիս,
Ո՛վ Հայրենիք աննըման,
Ի՞նչպէս բողբո մարդ զՔեզ
Մտնէ գերեզման:

Աչիքն առջեւ բացուեցաւ
Մի այլ տեսարան.
Վերջնաց ժամն էր,
Մօտ էր իրիկուան.
Արեւ երկնուց կամարէն
Իջեր էր վեր Վանայ ծովուն
Շառաւիղներ վերէն ձգելով
Կողջունէր հորիզոնին մօտ
Զրեղէն սրնսրղներու վերայ
Կապեր էր լուսեղէն սրներ:

Ծովն ու արեւ լոյսն ու ջրեր
Զիրար համբուրելով
Ելեւէջ խաղային:

Ելաւ, աւա՛ղ, մի ամպ մթազոյն
Բռնեց մրցնուց երեսն արեւուն.

Ա՛հ, ո՞ւր ես, հովիկ, վարէ՛ սար այդ ամպ,
Տեսնեմ վերջին անգամ

Իւր դէմքն պայծառ.

Ես ծովուն արեւուն սիրահար եմ, սիրահար,
Տեսնեմ պահ մի այդ չփնաղ տեսարան:

Այլ թո՛ղ, մի՛ սանիր, զիտեմ հետ արեւուն
 Տի մտնի անցնի իմ կենաց լոյս արեւ,
 Ո՛հ, այնուհետեւ էլ չէ ինձ համար
 Ո՛չ լոյս, ո՛չ արեւ եւ ոչ էլ աշխարհ.
 Ձեռ մեռնիր, արեւ, պահ մի կը նընջես.
 Կը զարթնուս այգուն, կ'ելնես անապատէն,
 Դարձեալ լոյս կը բերես մեր մութ աշխարհին:

Ես կը ննջեմ անլոյս գերեզմանին մէջ.
 Էլ չեմ ելներ, ո՛հ, չգիտեմ մինչեւ ե՛րբ.
 Կ'ասես թէ մինչեւ ժամհար Գաբրիէլ
 Չարնէ իւր կոչնակ՝ հնչէ փողն՝
 Մեռելոց աշխարհ զարթնու նոր հրաւժով.
 Դու յայնժամ տի ելնես
 գերեզմանէն ողջ,
 Դեռ նընջեմ ուրեմն
 մինչեւ զայ այն օրն:

ՏԱՂ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏԻ ԳԵՂԵՑԻԿ

(Տաղարանի մ'արտագրում)

Յովնաննէս կոյս մարգարէ, Երկրպագող յարգանդէ, որ գովեցար ի Տեառնէ,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Աղամ ձեռին ստեղծուած է, արդարն Աբէլ զենեալ է, ննովք յերկինքս հեմէ,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Աբրահամ ի սէր Փրկչին է, Սահակ ծառայ նորին է, վերնոյն կըռվող Յակոբ է,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Մովսէս նախնի մարգարէ, Յեսու զարեւոյ կանչէ, Միքիսեղէկ ածեալ է,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Բամից դատող Բաբայ է, Եփրայիմ անուանի է, ցոյց յԱսուծոյ Սամուէլ է,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Նաբան արդար մարգարէ, Դաւիթ աստուածահայ է, Սողոմոն զսանարն շինէ,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Եսայիաս սղոցեալ է, Եղիա վեր յերկինքս է, Եղիսէոս կըրկինն է,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Եզեկիայ բարի է, Յովսիա բարեպաշտ է, Չաւաբաբէլ արհնեալ է,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Եզեկիէլ փակող է, Չաբաբիաս աւետէ, Երեմիաս կոյս նա է,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Ամովս է սուրբ մարգարէ, Սափորիա-Անգէլէ, Բարոզ բանին Աբդի է,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Ըզնունան կէտքն կլանէ, դարձեալ կենդանի թփանէ, նա ի Նինուէ Բարոզէ,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Մաղաքիաս հրեշտակ է, Միքիա պատմաբան է, Ամբակում մեծ եւ Յովսէ,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Անանիանն յանուանէ, Ըզնունն ի ցաղ փոխարկէ, որք յառազասի է,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ.
 Չաբաբիա հայր քո է, եւ Բանանայ ընտեալ է, Եղիսաբէթ մայր քո է,
 Բայց թե՛ նըման ու՛մ ոք չէ: